

տեսիլ լուսաւոր » . Կայծ բառը զդ. Escar-
boucle բառին սեփականելն սխալ չէ , վասն
զի նոյն հանքին յատկութիւնը կը ցուցնէ :
Ս. Գրքի մեկնիչ մը կ'ըսէ որ , Escarboucle
մեծ Կարկեհան մ'է , նոյն իսկ գիշեր ատեն
կը հառադայթէ . և բուն Կարկեհանէն աւել
լի յողողուն է : Ոմանք (ինչպէս Boëtius և
Boot) ի Ս. Գիրս յիշուած յն. ἀσθρᾶξ բառն
բոլորովին Կարկեհանի (Rubis) հետ նոյն կը
համարին : Բայց այժմ նոյն բառն սեփակա-
նուած է Կարկեհանի մի տեսակին : — Կայծի
պարսիկ և թուրք բառն կը համարուի عسکر
= շէպէրաղ :

Հ. Ս. ԵՐԵՄ.

Շարայարելի

1. Հմմտ. Գիրք Ականց . էջ 48. « Եւ այսպէս
առնե թէ ի ժամանակ ինչ Եսգուլթ մի եղեալ
է շէպէֆրոնդ , զոր քննիչայի կուշէին , որ ի գի-
շերի որպէս հրազ վառեր , և Շէպէրաղ Կիւ-
հէրին առուծիւնն յայնմանէ է » : Գեռ աւելի
պատմական տեղեկութիւն կու տայ , զոր աւել
լորդ կը համարինք յիշելու :

Հետաքրքրական են մի քանի զրէադրաց մէջ
կայծի մասին եղած հետազայ տեղեկութիւնք :
Ապուսայիչայ զրէադիր մարդակազմութեան
զրքին մի օրինակին մէջ՝ ամենէն սկիզբը , կայծ
հանքի մասին հետեւեալ տեղեկութիւնն կը
կարդանք . « Կայծ , որ է եաղուծն (կ'իմանայ
թրքերէն Եսգուլթի հանքն) . բարքն այն է , որ
եթէ մարդ ի բերանն առնու զծարան կտրէ ,
և թէ զոսկին հալես , ոչ գտալուծն ի մէջ հա-
լած ոսկւոյն ձգես , ոչ այրի , և ոչ գոյնն աւել-
րի և ոչ պայծառութիւնն . . . » : Ուրիշ զրէադիր
ընտիր բառարանի մը մէջ կայծի բուն յատ-
կութիւնը կը նկարագրէ այսպէս . « Կայծն
զտանի ի կարքեզոն լիբէացուց , որ Ափրիկէ
կոչ . և սա ի գտանիլ ոչ ի աւելնջեան , այլ ի
դիշերի , և հեռառտանէ փայլեալ ըստ նմանու-
թեան զամբարի , երբեմն իրեւն զկայծ լուցանի ,
և երբեմն անցանէ . բայց որ ունի զտա չէ հնար
թաղուցանել . զի թէպէտ բազում հանդերձիւք
ծածկէ , նշուլ փայլատականցն արտաքս երեւի » :
Կայծի յատկութիւնը նշոյնպէս կը նկարագրեն
թէ մեր հին հեղինակք և թէ եւրոպացիք : Եւ
մեր մի քանի վերջնադարեան մատենագիրք
կայծի թրք . բառն Եսգուլթ կը կարծեն բայց
հիշելն մեր վերը իշխած Շէպէրաղ բառն կը
համարինք :

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ԱՍՏՐԱԽԱՆ

ԱՍՏՐԱԽԱՆ , ԱՍՏԵՐԻԱՆ կամ ՀԱՆ-
ՏԱՐԱԽԱՆ . ԳՂ. ASTRAKHAN. Ռ. Астрахань .

— Գիւնաւոր բաղաք Ռուսիոյ Համանուն կու
սակալութեան . Վոլկա գետոյն բերնէն հե-
ռու է գրեթէ 45 հազարամետր և կառու-
ցուած է նոյն գետոյն ճիւղերէն ձևացած լըղղ-
ւոյ մը վրայ : Եթէ պատմութեան վրայ այդ
դարձնենք , սիսի տեսնենք որ Աստրախա-
նի նահանգը ենթակայ եղած է բազմադի-



Աստրախամի Հայոց Ս . Աստուածածմի եկեղեցին :

մի անցքերու և պատմական մեծ դեր կա-
տարած , ծառայելով իբրեւ դռն և ճանա-
պարհ Եւրոպա գաղթող նախկին ցեղերու : Ոչ
սակաւ արագ արագ իրարու յաջորդող վայ-
րենի թափառականներ այս երկրի մէջ առ
ժամանակ մի բնակութիւն հաստատած են ,
և ապա կոխ մղելով իրարու դէմ տկարն զո-
րաւորին տեղի տալով փախեր է : Այդ

թափառական ազգերէն ծանօթ են Աւանը, Ռոստոյաններ, Ալագերներ, Ավարացիք, և այլն: Վայրենի ազգաց ժամանակամիջոցէն պատմական ստույգ տեղեկութիւնք կը պակսին, և արդէն մեր նպատակէն դուրս է զայնս քննելը: ԺԳ դարու մէջ քաղաքս թաթար խաներու իշխանութեան ներքեւ մտնելով, ըստ սմանց՝ այն միջոցէն Հաճի Թէր-խան իշխանի անուամբ՝ սկսեալ է կռուիլ Ափտէրխան:

Ռուսաց խան Ահնգ (Грозный) թագաւորը Ղազան քաղաքը նուաճել է վերջ, 1554 թուին տիրեց նաև Աստրախանի և բոլորովին ոչնչացուց Թաթար խաներու իշխանութիւնն: Նոյն թագաւորը 1568 թուին հին Աստրախանէն 10 հազարամար հեռու հիմնեց այժմեան քաղաքը, որուն վերքը դաշապին է, և մէջէն կ'անցնին երկու ջրանցք, մին կը կռուի Կոռառաւ, իսկ միւսն Վարպախէ վեհաւ ջրանցք, Վարպախիով յոյնի անուամբ, որ փորել տուած է 1805ին: Կլիման բարեխառն է, օդը և ջուրը ընդհանրապէս առողջարար: Ռուսիոյ հարուային քաղաքներէն մին լինելով, և ծովային ճանապարհով հազարակցութիւն ունենալով Պարսկաստանի հետ, վաճառականութիւնը բաւական ծաղկած վիճակի մէջ է: Արտածութեան կողմանէ Աստրախան Վոլկայի 10 նաւահանգիստներէն առաջին տեղին կը զբաւէ, իսկ ներմուծութեան մէջ երրորդ: Ալգային նաւահանգիստները կը զրկէ պլաւորաբար ձուկ և քարիւղ. իսկ ի Պարսկաստան, բամբակեղէնք, կտաններ, շաքար, մետաղեղէնք, և արուեստական զանազան նիւթեր: Կ'ընդունի Պարսկաստանէն, Բուխարայէն և Խիվայէն, բամբակ, պտուղներ, բրինձ, մետաքս, կաշի, բուրգ, և այլն: Գրեթէ տարւան մէջ միջին հաշուով Աստրախանի նաւահանգիստը կը մտնեն 4000—4600 նաւ և նոյնչափ ևս կ'ինքն: Արուեստական մասին մէջ քաղաքս այնչափ ծաղկած չէ, սակայն ունի գործարաններ մետաքսի, մեքենաներու, օճառի, մսի, կաշիի, զարեւոյ, և այլն: Ըստ վերջին (1897 տր.) վիճակագրութեան, Աստրախանի բնակչաց թիւն կը հասնի 125000ի, մեծամասնութիւնն

կը կազմեն Ռուսը, միւս ազգերն են Հայը, Թաթարը, Հրեայը, Պարսիկը, Գերմանացիք, և այլն: Քաղաքս ունի զանազան դպրոցներ, նաւային վարժարան, մէկ գինուարական և երեք քաղաքական հիւանդանոցներ, յիմարանոց, ծերանոցներ, երկու որդանոց, հասարակաց գրատուն (14000 հատուրներով), թատրոն, և այլն:

Եւրոպայի և Ասիոյ զանազան կողմերը ցրուած Հայերէն ամենէն հինները և նշանաւորները կը համարուին հին Աստրախանցիք, որք Անուոյ վրայ եղած ութերորդ կամ վերջին արշաւանաց և աւերմանց ժամանակները 1239ին, Թաթարաց Զամախան զորավարին ձեռքէն խոյս տալով ապաստանեցան քաղաքս, յորում գրեթէ 100 տարի բնակել է վերջ, բազմութեամբ ոտք ելան և Թաթարաց հետ պատերազմելով, անցան Խորմ և անկէջ ալ կամաց կամաց Լեհաստան, Հունդարիս և այլ աշխարհներ: Այժմեան Աստրախանցի Հայոց նախնիք Անեցիներն են: Վերոյիշեալ դեպքէն վերջը որոշ չի գիտցուի, թէ քաղաքս մէջ մշտաբան Հայեր կային. բայց յայտնի է որ ԺԷ դարուն սկիզբները Պարսկաստանէն բաւական թուով Հայ վաճառականներ եկած են և հոն տեղաւորուած: Ռուսաց Մեծն Պետրոս կայսրը, լաւ ըմբռնելով Հայոց ազգի վաճառականութեան և արուեստից ունեցած մասնաւոր յարմարութիւնն և հանձարն, նա իրեն հրաւիրեց զՀայս յԱստրախան, և մասնաւոր արտօնադիր ևս շնորհեց անոնց՝ որպէս զի իւր տէրութեան մէջ ծաղկեցնեն թէ վաճառականութիւնն և թէ արուեստներն: Տեղւոյս Հայերը արտօնապէր ընդունած են նաև ուրիշ կայսրներէ. բայց իրենց շնորհուած ազատութիւնները անփոփոխ չլինացին, մասամբ մը իրենց կամեց' մասամբ մ'ալ տէրութեան կողմանէ երբեմն աւելցան և երբեմն պակսեցան: Քաղաքս Հայք հետզհետէ բազմացած են զաղթելով զանազան կողմերէ, ինչպէս Պարսկաստանէն, Արցախէն, Կովքէն, Ղազանէն, Տարօնէն և Աղուանից աշխարհէն: Այժմ Աստրախանի Հայոց թիւն կը հասնի 6500 հոգւոյ: Ունին չորս հոյակապ եկեղեցիներ, սրբ են Ա. Ս. Աստուած

ծածիւն, Ս. Պետրոս Պօղոս, Ս. Կատարինէ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ. Հինգերորդ եկեղեցի մ'ալ ունին քաղաքէն դուրս Ս. Յարաքիւն անուամբ՝ գերեզմանոցի մէջ։ Ս. Առուածածին է մայր եկեղեցին. կառուցուած է չորս սինիւրու վրայ, գմբեթայարկ և գեղեցիկաշէն. ներքուստ զարդարուած ու կեզոծ նկարներով և արծաթապատ պատկերօք։ Իսկ զարդուց, զգեստուց և արծաթեղէն անօթոց և սպասուց կողմանէ ևս խիստ ճոխ է։ Ունի նաև վայելչաձև և գեղեցիկ զանգակատուն մը՝ շքեղ կաթուղիկէով։ Այս զանգակատան մէջ Սարգիս Է. պիսկոպոս Ջալալեանց 1850ին անխնամ ձգուած գտաւ և ցուցակապրեց այլ և այլ ձեռագիր և տպուած գրքեր, զորս հաւաքած էր Յովսէփ արքեպիսկոպոս Արղունեանց՝ զանազան կողմերէ, որոց մէջ կար նաև Գրիգոր Նիւսացւոյ երգ երգոցի մեկնութիւնը գրուած Հայոց Յիս (= 893) թուին և բերուած հոս ի Սանահնէ։ Աստաբախն կը կազմէ Ռուսաստանի Հայոց թեմերէն մին, հետեաբար ունի իւր առաջնորդ թեմակալ եպիսկոպոսը կամ արքեպիսկոպոսը, զոր կ'առաջարկէ Էջմիածնի կաթողիկոսը և կը հաստատէ Ռուսաց կայսրը առանձին հրովարտակալ։ Ներկայ թեմակալ առաջնորդն է Գեոր. Արքեպիսկոպոս Սեդրակեան։ Մեծաշէն և փառաւոր առաջնորդարանը կառուցուած է մայր եկեղեցւոյ մօտ։ 1795 թուին Յովսէփ արքեպիսկոպոս Արղունեանց աստ հիմնած էր Աստաբախնի միակ հայկական տպարանն, ուր տպուած են ըստ մեծի մասին եկեղեցական գրքեր և օրացոյց։ Յաւալն է ըսելն որ այլ տպարան շատ տարիներէ ի վեր անգործութեան զտապարտուած է։ Ս. Պետրոս Պօղոս եկեղեցին ևս յոյժ գեղեցիկ և հոյակապ շէնք է, գմբեթաւոր և երկու եռալարկ և սրածայր զանգակատամբ։ Այս եկեղեցին ևս հարուստ է ծանրագին շուրջառներով, և անօթներով, արծաթապատ սաղաւարտներով, խաչերով, ջահերով, կանթեղներով, բաւականաչափ զարդարուած, և այլ զարդուք։ Ջալալեանց զմայլած տաճարի գեղեցկութեան և ճոխութեան վրայ կ'ըսէ. « ... համեմատ նմին

եկեղեցի չունին ամենին Հայք ոչ ի Հայաստան և ոչ ի Ռուսաստան »։ Եկեղեցւոյ մէջ է Տեառն մերոյ Յիսուսի Գրիստոսի խաչէն վար առնելու և գերեզման դնելու պատկեր մը, որ յոյժ գեղեցիկ օրինակութիւն մ'է հոշակապանծ իտալացի նկարին Ռափայելի, որուն բուն օրինակն կը գտնուի Հռոմի։ Այս պատկերին համար կը պատմեն, թէ Ռուսաց Սուլթանով զօրապետը Իտալիայէն բերելով նուիրած է Կատարինէ թաղուհւոյն, և նա տուած է իրենց քաջ զօրավարին իշխան Գրիգոր Պօտեմկինի։ Իսկ Պօտեմկին իշխանն ալ Յովսէփ արքեպիսկոպոս



Աստաբախնի Հայոց Ս. Պետրոս Պօղոս եկեղեցին։

Արղունեանցի, նա ալ բնծայած է եկեղեցւոյս։ Եկեղեցւոյս Հիմն ձգած է Մինաս արքեպիսկոպոսը, և կաթողիկէն վերստին շքեղազարդած և նորոգած է Յովսէփ արքեպիսկոպոսը, իսկ զարուս (ժԹ) կիսուն թէ՛ ներքուստ և թէ՛ արտաքուստ աւելի ճոխացուց և պայծառացուց Մեծ. Գրիգոր Դանիէլեան Սարգսեանց։ Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցին ի հիմանց կառուցած է Մեծ. Դանիէլ Սարգսեան։ Ս. Պետրոս Պօղոս եկեղեցւոյ մօտ, իրեն սեփական ծախքով, և արքունական զանձարանի մէջ յատուկ դրա-

մատուցուի ևս զրած է, ուսկից տարեկան նու-
րորդութեանց և ծախուց համար որոշեալ
գումար մը կ'առնուն։ Ս. Կատարինէ եկե-
ղեցին փոքր է և կ'ինկնայ թաղաքէն դուրս
հարաւակողմը, Մայր եկեղեցիէն կէս մղոն
հեռի, հին գերեզմանատան մէջ։ Քաղաքիս
աւիտատեղին զարձած է, ուր կը դիմեն
բազմութիւն ժողովրդոց, և աւել Սարգիս
անուն վարդապետի մը գերեզմանին, յորմէ
շատ հրաշքներ տեսած են։

Ատորախանի մէջ կանխաւ կային նաեւ
կաթուղիկէ Հայեր, որոց թիւը թէն քիչ
էր, սակայն լաւ դիրք ունէին։ Դեռ 1830ին
ժամանակները իրենց թիւը կը հասնէր
մօտ 300ի, և ուրիշ կըրկն եկեղեցիներ.
մին՝ Վերափոխման՝ գեղեցիկ և նորաշէն,
երկու զանգակատամբք։ Եկեղեցւոյս մօտ
էր կրկնայարկ վանատուն մը 8 սենեակներ.
բոլ, և ուրիշ մերձաւոր շէնքի մը ստորին
յարկի մէջ ալ կ'ուսանէին կաթուղիկէ Հայոց
մանկուծք։ Միւս եկեղեցին կը գտնուէր
քաղաքէն դուրս իրենց գերեզմանատան մէջ
և կը կոչուէր յօնուն Գաբրիէլի հրեշտա-
կապետի։ Այժմ ցաւ ի սիրտ պէտք ենք
ըսել, թէ այդ հասարակութիւնն զուրկ մնա-
լով իմաստուն և ազգասէր հովիւներէ, ժա-
մանակի ընթացից մէջ կորսնցնելով իրենց
ազգային ինքնուրոյնութիւնը, ձուլուեց և միա-
ցեւրէ և Ռուսաց հետ։ Ներկայապէս թէ և
կան մի քանի ընտանիք, սակայն աղքատին
և չնչին ապրուստով հազիւ կարող են ապ-
րեցնել իրենց գոյութիւնը։

Ատորախանի ազգայինը անտարբեր չեն
եղած դէպի ուսումն և գիտութիւն։ 1806ին
Հայազդի ոմն պարոն Աղապապեանց տե-
րութենէն թոյլտուութիւն կը ստանայ և իրեն
սեփական ծախքով կը հիմնէ ազգային վար-
ժարան մը Աղապապեան անուամբ, որ և մինչև
ցայսօր կայ։ Այս վարժարան անտեսակա-
նապէս բոլորովին ապահովուած լինելով
զուտ ազգային կրթութեամբ կը շարունակէ
իւր գոյութիւնը մինչև 1896 թուականը։
Այնուհետև կ'անցնի Ռուսաց կառավարու-
թեան ձեռքը և կ'ինկնայ Լուսաւորութեան
Մեխակարութեան անմիջական հսկողութեան
ասկ. սակայն Հայերէն լեզուի ուսումն՝ հիմ-

նադրի ժառանգներու աշխատութեամբ, բո-
լորովին չի վերցուիր։ Այժմ վարժարանս կը
կոչուի «Ատորախանի Հայոց գաւառական
ուսումնարան»։ Ունի Հայ հասարակութենէն
ընտրուած մեց անձինքներէ բաղկացած հո-
գաբարձութիւն մը. ուսումնարանին զխաւոր
կառավարիչները միշտ եղբր են Հայ։ 1860ին
ատենական Հայր ունէին նաև առանձին հո-
գեւոր պարանոց մը, որ քանի մը տարի բաց
մնացած է։ Ունեցեր են նաև սրահան և
իգական սեղի մի քանի պարոցներ, որոնք կը
կոչուէին «Հայոց եկեղեցական ծխական դըպ-
րոցներ»։ Այս պարոցներէն մին՝ տղայոցը կը
գտնուի Ս. Ստուռածանի եկեղեցւոյ գաւիթի
և ուրիշ մը օրիորդաց՝ Ս. Կատարինէ կոյսի
եկեղեցւոյ գաւիթը. 1896ին երբ բոլոր
Հայոց պարոցներն անցան կառավարութեան
ձեռքը՝ վերայիշեալ երկու պարոցները փա-
կուեցան։ Ուրիշ օրիորդական՝ երկգասեան
պարոց մ'ալ կայ Ս. Պետրոս Պողոս եկե-
ղեցւոյ մօտ, որ այժմ չորեքդասեան եղբր
է և կը շարունակէ իւր գոյութիւնը։ Հայր նու-
րոց կառուցած են Ս. Պետրոս Պօղոս եկե-
ղեցւոյ դիմաց, փառաւոր և հոյակապ քա-
րուկիւր շէնք մը, որ լինելու է ազգային
պարանոց. սակայն բացման ըրձալի թոյլ-
տուութիւնն դեռ ստացուած չէ կառավարու-
թենէն։

Հայոց ներթական տնտեսական վիճակն
ընդհանրապէս լաւ է. կը զբաղեն զգաւորա-
բար արուեստներով, ունին մեծ և փոքր
վաճառատոցներ և կրպակներ, առուտորը
յաջողակ է։ Մեծ վաճառականներ քիչ կան,
հազիւ մէկ երկու անձինք, որք բազմաթիւ
առու զրամատներու հանդոյն կը զբաղին
ձկան առևտրով։ Երբ Ռուսիոյ մէջ արուեստ-
ներն այնչափ ծաղկած չէին, Ատորախանի
Հայր խիտ յառաջացած էին ներկարարութեան
արուեստն մէջ. մինչև անգամ քա-
ղաքէն ի Մոսկուս հրաւիրուած են Հայեր,
այդ արուեստն առուսաց սովորեցնելու հա-
մար։ Այժմ Հայոց մէջ կան նաև շոգենաւ և
առագաստանաւ ունեցող վաճառականներ. —
Քաղաքիս ազգայինը ունին նաև յատուկ
հոգաբարձութիւն մը Հայ անանկաց համար,
որ ունի մօտ 150,000 քուրքի, և բաւա-

կան մեծ գումար մ'ալ պիտի աւելնայ դրոս վրայ Յովսէփ սարկաւազի կտակով որ դեռ Ռուսաց ձեռքն է։ Աստրախանի Հայոց նիւթա կան վիճակն որչափ որ լաւ է, ի հակառակէն իրենց միջէն ազգային ինքնուրոյն կեանքը որ ըստ օրէ կը պակսի, շոյլ կեանք վաբել սկսած են, թղթախաղը տարածուած է, պտտիլը նուազած և անոր հետեւանը փոխա

նակ բազմանալու կը նուագին։ Յանկայի է որ այժմեան Աստրախանի Հայ Հասարակութիւնն, հետեւելով իր նախնեաց բարի բարի օովորութիւններուն, ետ կենայ այդ փառակար և ազգակործան դիրքէն, աւելի ուժ և մղում տայ ազգային լուսաւորութեան, ուստանց, արուեստից և գիտութեանց մէջ յառաջանալու գործին. որովք միայն կարող



Արատէս վանքի աւերակները :

պիտի լինի ապապային ունենալու։¹ Ընտիր յաջորդներ։

Քաղաքիս մէջ Ռուսը ևս ունին արքեպիսկոպոսական աթոռ. իրենց բազմաթիւ եկեղեցիներէն գեղեցիկագոյնն է մայր եկեղեցին, յորում կը պահուին զանազան հնութիւններ, այսինքն զգետներ, սաղաւարտներ, թանկագին ակունքներով զարդարուած աւետա

րաններ, և այլն։ Այս հնութեանց հետքեր պահուի նաև Ղուկաս կաթողիկոսի մէկ կոնգակը։ — Աստրախան՝ ժամանակի շրջանաց մէջ ունեցեր է զանազան տեսակ պատահարներ. ժամտախա՝ Ժէ դարու երկրորդ կիսուն, և վերջին անգամ 1887ին. հրդեհներ 1709ին, 1878ին² և 1880ին. հնդկախտ (choléra) 1830ին, որով մեռան 3000 հո

գիք. ողողմունք՝ ամենէն աւելի ֆաստաբեր 1861ին. երկրաշարժ՝ երկու զօրաւորագոյնքն 1866ին, և 1886ին աւելի թեթեւ. — Ճնւրհ. Ի Լեհաստան, 390—403: Ճնւրհ. Ջալալեանցի, Բ. 438—444: Եւ այլն:

Ա Ր Ա Տ Ե Ս

ԱՐԱՏԵՍ. ԱՐԱՏԵՍԻ կամ ԱՐԻՏԵՍ. —

Հին գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի՝ բոլորածեւ հովտի մը մէջ, վտակի մը աջ կողմը: Այժմ ծածօթ է Այսասի անուամբ, և ունի 45 տուն այլազգի բնակիչ: Գիւղին մէջտեղը բարձրաւանդակի վրայ է հիւսն կառուցուած էր հոյակապ վանք մը՝ Առաւտեսի վանքը, զոր կը յիշէ Սիւնեաց պատմիչը, որ և գիւղին հետ իւր Տարսային հօրէն իրեն ժառանգութիւն վիճակելով՝ նուիրեց Նորաւանդի հռչակաւոր ուխտի միանձանց, իբրեւ կայուն և քնակարան ամրան: Տակաւն թէ և մասամբ կանգուն են վանաց եկեղեցիներն, սակայն ամայի, և օրէ օր քայքայման և կործանման տխուր վիճակի մէջ են: Այս եկեղեցիներէն զխաւարն կառուցուած է չորս որմափակ սենաց վրայ. ունի երկու աւանդատունք և մատուներ ալ և ձախ կողմերը, որոց մէջ կան պատարագի սեղաններ: Ունի նաեւ ժամատուն՝ կոփածոյ քարերով շինուած, վեց որմափակ սիւներով, և երկու խորանօք և պատուհաններով: Արտաքին կողմէն հարաւային որմնի վրայ քանդակուած կայ արեւային ժամացոյց, տասուերկու շառաւիղներով՝ իւրաքանչիւրի ծայրերը հայկական տառերով Ա. Բ. Գ. մինչև ԺԲ: Արեւելեան որմնի մօտը կայ որորոցածեւ տապան մը ԶԼԹ (= 1280) թուականաւ գեղեցկատառ արձանագրութեամբ, յորում հանգչին նշխարք վանքս նորոգող Բարաճապետ Հայրապետի. Ժամատան հարաւային որմնի վրայ եւս կայ Մամաքս անուն անձի մը նուիրատուութեան յիշատակարանը. ներքին որմերու վրայ եւս կան արձանագրութիւնք: Հիւսիսային կողմէն զանով մը կը մտցուի երկրորդ եկեղեցին, կանգնած չորս որմափակ բարձր և նուրբ

ոնանց վրայ, որոյ տանիքն խախտած է և այժմ թերեւս կործանած: Վերոյիշեալ ժամատան կամ զավթի վրայ շինուած է եղբր փառահեղ զանգակատուն վայելուչ կաթուղի. կէով, որ աւանդ այժմ կործանած է: Նոյն տխուր բազկին են վիճակուած այժմ նաեւ զավթի հիսիսային և հարաւային պատերն, և միայն մնացած են կամարակապ սրբատաշ քարէ առաստաղը և սիւններն: Գաւթի արեւմտեան զրան ճակատը կայ ճարտարաքանդակ պատկեր Տիրամօրն՝ Յիսուս գիրկը, և երկու կողմը կրկին անձնաւորութիւնք: Երրորդ նոյնպէս կիսակործան եկեղեցւոյն քանդակներն և զրան զրուագիները աւելի նուրբ արուեստով շինուած են, ուր կը տեսնուին զանազան ձեւերով խաչեր, ողկուզներ, կենդանիներ, և այլն: Վանաց եկեղեցեաց որմերու և խաչարձաններու վրայ կան բաւական թուով արձանագրութիւններ, յորոց մին կը յայտնէ երեք եկեղեցիներուն աւանդանք, որք են Ս. Սիովն, Ս. Աստուածածին և Ս. Կարապետ: Վանաց արձանագրութիւններէ չի յայտնուիր հիմնարկութեան թուականն, եղած թուականներէն հնագոյնն է ՆԻԴ (= 975), և նորագոյնն՝ ՌԺԿ (= 1714): Գիւղին մէջ ցրուած խաչքարերն նշանաւոր են 200 քալլ եկեղեցիներէն հեռու գտնուած երկու գեղեցկաքանդակ խաչարձանք՝ բարձր պատուանդաններով, որոց մին ընկած է գետին: — Սխական, 144—145: Հնոթիսեց վանօթից, Թ. 279: Եւ այլն:

Հ. ՍՈՒԿԻՍԻՍ ԷՓՐԻՍԵԱՆ



ԲԻԻՐԱԿՆ. — Կը հրատարակէ բանասիրական, տեղագրական, ազգագրական յօդուածներ: Խմբ. Ս. Դաշքեան: — Գինն է 45 ֆռ.

Հասցէ Direction du « *Puraghn* » Bahtché kapou kazasker han N. 16 CONSTANTINOPLE.

ՊԱՏՄԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻԼԻԿԵԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ

Կը կատարենք անհատակ ինչ որ անցեալ բոլոր խոստացած էինք. «Բազմալեզու», ի ընթերցողաց կ'ընծայենք լիակատար բարգմանութիւն մը Քրոնթ. Յովսէփ Քարադէի « Historische Grammatik des Kilikisch-Armenischen » գործոյն. և կը յոստանք որ բառական պիտի հետաքրքրէ մեր ազգային բանասերները:

Հ. Յ. ԱՒԳԵՐԵԱՆ

ՆԵՐԱՇՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԵՊ նոր Հայերէնի՝ որ հարուստ է գաւառաբարբառներով, որոց մեծամասնութիւնը երկու գլխաւոր խումբերու կը բաժնուի, Արեւելեան և Արեւմտեան Հայերէն¹, կը ներկայանայ Հին Հայերէնը, ինչպէս գրականութեան մէջ կը տեսնենք, իբրեւ սերտ միութիւն մը: Թէպէտ Հայերէն Հին գրաբարը անշատ զաւառաբարբառ մը չէ, ինչպէս է Հին բարձր գերմաներէնը, սակայն կարգ մը մատենապարագ քով աշխարհաբարի հետքեր կը նշմարուին, ի մասնաւորի հոլովման զգալի առանձնայատկութիւնը, որոնք սովորական գրական լեզուէ օտար են, ինչպէս յոգնակի ձեւերն — ետք և անի². ասոնք այնպիսի օտար խառնուրդներ են ըսն գրաբար լեզուին մէջ, որ անոր ժամանակակից ժողովրդական կամ ուսմական լեզուէ մը յառաջ եկած պիտի ըլլան:

Թէպէտ և կը տեսնենք որ աշխարհաբարի յայտնի ազդեցութիւնն զրաբարի կենաց վրայ, ամենահին ժամանակներէն ի վեր հառ-

տատուն և անդադար կերպով կ'աճի, սակայն **Ե-Ժ** դարերու միջոցին՝ զեռ ուսմական տարրը երկրորդական և ստորակարգեալ դեր մը կը խաղայ: Ժ դարէն շատ յառաջ արդէն գաւառական լեզուն, մեռեալ լեզու մը համարուած էր. այսու ամենայնիւ պահուած էր զեռ իբրեւ հասարակաց և աւանդութեամբ նուիրագործուած գրական լեզու մը, իբրեւ Հայ ազգին ժառանգութիւն մը:

Այնպիսի էր սակայն որ այս անկանոն վիճակը երկար ժամանակ տեւէր: Ռուբինեանց Հարստութեամբ՝ երբ Կիլիկիայ մէջ Հայ ազգային նոր թագաւորութիւն մը հաստատուեցաւ և ազգին մեծագոյն ազդեցութիւնը Հին մայրենի երկրէն հոն փոխադրուեցաւ, այն ատեն քաղաքական վերածնութեան հետ սկսաւ նաեւ գործօն և հոգեւոր կեանք մը: Եւ ինչպէս շատ մը Հինցած աւանդութիւնք մէջտեղէն վերցան, այսպէս նաեւ Հին ու մեռեալ գրական լեզուին կապանքը խորտակուեցան, և այնուհետեւ միայն գրեթէ իբրեւ ուսումնական և եկեղեցական լեզու մը գործածուեցաւ, ինչպէս որ զեռ մինչեւ ցայսօր կ'ապրի: Այն ատեն իբր առաջին անգամ երեւցաւ ուսմական գրականութիւն մը, որուն լեզուն Հինական մասամբ՝ ժամանակակից ժողովրդեան լեզուն է, այն գրութեանց մէջ մասնաւորապէս՝ որ կը վերաբերին ազգային ու ժողովրդական կենաց, իրաւագործութեան, երկրագործութեան, բժշկութեան, կառավարութեան, վաճառականութեան և երթեւեկութեանց: Այսպիսի գրութիւններ են. Միթթար Հերացի՝ Զեբմանց միսթարոսթիւն (յամին 1184), Գիրք վաստակոց (ԺԳ դար?), Աստիք-հոռվմեական դատաստանագիրք (ԺԳ դար?) Տարեգիրք Սմաւոյ (ԺԳ դար), Իրեն Ամսիգըն Անտիոքայ (ԺԳ դար) և իւր՝ Միթթար Փոշի

1. Հնչմամբ կը զանազանուի Արեւելեան և Արեւմտեան Հայերէնը, կրկին Հայ Զայնալըք-Ջուխեան համեմատ. ըստ արեւմտեան Հայերէնի, Հին նուրբերը ք, ց, ձ, չ համապատասխան միջիններու, Հին միջիններն ալ պ, տ, կ, ժ, ձ համապատասխան նուրբերու փոխուած են. մինչդեռ Արեւելեան Հայերէնի մէջ

ասոնք պահած են իրենց Հին հնչումը: Երկու գլխաւոր զաւառաբարբառներու մէջ եղած ուրիշ տարբերութեանց մասին Հմմտ. Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes. 1, 182 f. ինչպէս նաեւ Պատկ. Dial. 16 ff:

2. Մանրամասն կը խօսի ասոնց վրայ Ա. արենեան. Բնական քերականութիւն I, 61-120: